

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....8

Сейран Закарян - *ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.* 16

Seyran Zakaryan - *GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.* 17

Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 19

Асмик Амирджанян - *ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.* 27

Hasmik Amirjanyan - *ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.* 28

Վարդան Մխիթարյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ 29

Вардан Мхитарян, Гохар Гамбарян - *ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.* 39

Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - *INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX*..... 39

Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՐԳՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ..... 45

Лилит Макарян - *К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.* 49

Lilit Makaryan - *ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.* 49

Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ 50

Феликс Мовсисян - *ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.* 66

Felix Movsisyan - *ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.* 67

Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ..... 69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մժբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՊԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Արման Սաֆարյան

ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐՈ՝ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հիմնարաներ. հայկական լրագրություն, բնապահպանական խնդիրներ, մուլտիմեդիա տարածք, մուլտիմեդիա լրագրություն, անհատականացված լրագրություն:

Տեղեկատվության տարածման համակարգում մուլտիմեդիային հարթակների ձևավորման և առավել արդյունավետ օգտագործման հիմնահարցը հետևողականորեն արժևորվում է հետազոտողների կողմից հատկապես վերջին տարիներին¹: Տեխնիկական առումով մուլտիմեդիայնությունը ընկալվում է իբրև «համակարգչային համակարգ, որն իր մեջ ներառում է տեքստային, աուդիո ձայնային և վիդեո վիզուալ բաղադրիչներ»², իսկ ՉԼՄ-ների վերաբերյալ՝ իբրև «տեղեկատվության ներկայացման բնութագրում տարբեր մեդիային հարթակների (վերբալ տեքստ, լուսանկար, աուդիո, վիդեո, գրաֆիկա, անիմացիա և այլ՝ նրանցից ածանցյալ ձևեր) օգնությամբ»³: Ստեղծվում են ոչ միայն տպագիր պարբերականների, ռադիոընկերությունների և հեռուստաալիքների էլեկտրոնային կայքեր, այլև ձևավորվում է համացանցային լրագրության յուրօրինակ ֆենոմեն, որի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ տնտեսական արդյունավետությամբ համեմատած անալոգային ՉԼՄ-ների հետ, ինտերակտիվությամբ (համացանցում առավել մատչելի է դառնում լսարանի հետ փոխադարձ կապը և հնարավորություն է ստեղծվում առավել արագ արձագանքել լսարանի կարծիքին) և տեղեկատվության ակնթարթային հաղորդման հնարավորությամբ:

Հետազոտողներից ոմանք կարծում են, որ լրագրության ոլորտում վերոհիշյալ փոփոխությունները արգելք են հանդիսանում հրապարակախոսության զարգացման համար, ոմանք էլ դիտարկում են նույն փոփոխությունները որպես նոր մարտահրավեր-հնարավորություն՝ ժանրի հետագա զարգացման համար: Ի. Դ. Ֆոմիչովան նշում է, որ ժամանակակից հետազոտություններում առկա մուլտիմեդիային լրագրության համալիրի՝ հրապարա-

* Հոդվածը ներկայացվել է 07.10.2020 թ., գրախոսվել՝ 05.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Մանավիրյան Ի. Դ., *Публицистика в эпоху интернета*, *Вестник Московского Университета*, сер. 10, *Журналистика*, н. 5, 2013, стр. 94-111, <https://vestnik.journ.msu.ru/upload/iblock/59d/2013-5-94-111.pdf>; Мисонжников Б. Я., *Публицистика осваивает сетевое мультимедийное пространство*, *Век информации*, н. 2-2, *Институт “Высшая школа журналистики и массовых коммуникаций” федерального государственного бюджетного образовательного учреждения высшего профессионального образования “Санкт-Петербургский государственный университет”*, Санкт-Петербург, 2017, стр. 127-129; Зубко Д. В., *Медиа в интернете: Новые возможности для публицистики*, *Международный научно-исследовательский журнал*, н. 11 (65), ч. 2, ноябрь 2017, Екатеринбург, 2017, стр. 21-25, <https://research-journal.org/wp-content/uploads/2017/11/11-2-65.pdf#page=21>; Лачимова В. А., *Новое медиа пространство – “новая” публицистика?*, *Профессиональная культура журналиста цифровой эпохи: материалы Студенческих научных чтений (Екатеринбург, 20 апреля 2017 года)*, Екатеринбург, 2017, стр. 145-147, https://elar.urfu.ru/bitstream/10995/47969/1/journ_student-2017_054.pdf; Հոլմսթրիպս Մ.Մ., *Ռադիոն գլոբալացման դարաշրջանում*, *Вестник Российско-Армянского университета: гуманитарные и общественные науки*, н.2, РАУ, Ереван, 2017. стр. 194-200.

² Տե՛ս Զубկո Դ. Վ., *Медиа в интернете: Новые возможности для публицистики*, *Международный научно-исследовательский журнал*, н. 11 (65), ч. 2, ноябрь 2017, Екатеринбург, 2017, стр. 21-25, <https://research-journal.org/wp-content/uploads/2017/11/11-2-65.pdf#page=21>

³ Նույն տեղում:

կախոսության դերի մասին որոշ դժվարություններ էլ պայմանավորված են այն հանգամանքով, որ արևմտյան գիտաբանական ավանդույթում բացակայում են համապատասխան ձևակերպումները. եթե հետխորհրդային տարածքում հրապարակախոսության ժանրը ավանդաբար տեղ է զբաղեցնում ժուռնալիստիկայի մասին հետազոտություններում, ապա Արևմուտքում «հրապարակախոս» կարող են կոչել և գովազդային գործակալին, և միջազգային իրավունքի փորձագետին, իսկ «հրապարակախոսություն» գիտաբանը հաճախ չի արտացոլվում ոլորտի մասին ծավալուն մենագրություններում, իսկ հրապարակախոսության ժանրին համապատասխանում են թե «կարծիքների ժուռնալիստիկա» հասկացությունը, և թե «պամֆլետագիրների» ինստիտուտը¹:

Միաժամանակ առավել շեշտադրվում է լրագրողական նյութի «պերսոնալիզացիայի» անհրաժեշտությունը՝ մուլտիմեդիայնության պայմաններում: Մասնավորապես հետխորհրդային հետազոտողներից Վ. Ա. Լաչինովան, հենվելով Թոմաս Վուլֆի հետազոտությունների վրա, նշում է, որ «տեղեկատվական առատության» արդի պայմաններում առաջին պլան է մղվում հենց «հեղինակի դիրքորոշումը»²:

Ժամանակակից մուլտիմեդիային լրագրության համալիրում հրապարակախոսական ժանրի բնութագրերի իմպլիմենտացիայի գործընթացում, մեր կարծիքով, կարևորվում է տարբեր երկրներում հրապարակախոսության կայացած ավանդույթների ուսումնասիրությունը: Հայաստանյան իրականության մեջ, կարծում ենք, մասնավորապես, հույժ արդիականություն է ձեռք բերում հայ գրականության ու հրապարակախոսության՝ բնապահպանական թեմատիկա արծարծող ուրույն նմուշների նորովի իմաստավորումը՝ նաև մուլտիմեդիայի «գործիքակազմով» արդի մարտահրավերներին պրագմատիկորեն պատասխանելու գործընթացում³:

Անտառապատման, կանաչապատման, «ծառ ու ծաղկի» գովերգման թեմատիկան ավանդաբար առկա է մեր թե՛ միջնադարյան, թե՛ նոր գրականության (մասնավորապես, պոեզիայի), ինչպես նաև խորհրդային շրջանի հայ ճանաչված գրողների հրապարակախոսության մեջ. հիշարժան են Խոսրովի անտառի տնկման պատմությունը Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունում, Միսակ Մեծարենցի «Աբայաններուն սյուքին տակ» բանաստեղծությունը, «Սոսյաց անտառի» հիշատակությունը Դանիել Վարուժանի գլուխգործոցում «Ձոն» բանաստեղծության մեջ, Արևելյան Հայաստանի տարածքի կանաչապատման հիմնահարցի բարձրացումը Խաչատուր Աբովյանի, Ռաֆայել Պատկանյանի⁴ և Ալեքսանդր Շիրվանզադեի կողմից: Խորհրդահայ մտավորականությանը

¹ *Տե՛ս* Фомичева И. Д., *Публицистика в эпоху интернета, Вестник Московского Университета, сер. 10, Журналистика, н. 5, 2013, стр. 94-111, <https://vestnik.journ.msu.ru/upload/iblock/59d/2013-5-94-111.pdf>*

² *Տե՛ս* Лачинова В. А., *Новое медиа пространство – “новая” публицистика?, Профессиональная культура журналиста цифровой эпохи: материалы Студенческих научных чтений (Екатеринбург, 20 апреля 2017 года), Екатеринбург, 2017, стр. 145-147,*

https://elar.urfu.ru/bitstream/10995/47969/1/journ_student-2017_054.pdf

³ Վերջին տարիներին հայ իրականության մեջ հատկապես ընդգծվում է լրագրության դերը բնապահպանական հիմնահարցեր լուսաբանելու գործընթացում: Մասնավորապես տե՛ս Հովսեփյան Մ.Մ., Ալավերդյան Դ.Դ., *Սևանա լճի Էկոհամակարգի հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկությունները ՀՀ ՉԼՄ-ներում, Բնապահպանական խնդիրների ժուռնալիստիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ, Ե., 2015 թ., էջ 31-38:*

⁴ Ուշագրավ է, որ երկու անգամ (1879 թ. և 1887 թ.) Երևան այցելած Ռ. Պատկանյանը, մտահոգվելով քաղաքի կանաչապատման հարցերով, տարակուսել է, թե ինչու տանուներ երևանցիները «փողոցումը ամեն տան առջև չեն տնկում ծառեր, պրոփինակ՝ վայրի տանձի, թթենի, ընկուլի (պոպուկի), սոսի, աճարի, բեկոնի, դեղձի, վայրի շագանակի և այլն, որով քաղաքի տողը, փողոցների փոշին, ցեխը, աշնան ու զարնան ավելորդ խոնավությունը, ամառվա անտանելի չորությունը, բոլորովին կպակասեին ու ձմեռվա ցրտի պորությունը կթուլանար» (տե՛ս Պատկանյան Ռ., *Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1968, էջ 91*): Միաժամանակ Ռ. Պատկանյանը հորդորում էր երևանցիներին չտնկել բարդիներ (տե՛ս նույն տեղում, էջ 90), ինչպես նաև «պարտեպի հողը յուրաբանյուր աշնան անպատճառ աղբով (պաճարի, գրաստի կամ մարդու) խառնել... ծառերը կուռճին, կհաստանան, կբարձրանան, պտուղը չափապանց քաղցրություն կստանա, ծառերի սաղարթը երկար ժամանակ կպահե յուր դալարությունը...» (մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 91):

ծանոթ էին նաև ռուսաստանյան և խորհրդային մյուս հանրապետությունների հեղինակների՝ բնապահպանական թեմաներ արծարծող գեղարվեստական ստեղծագործությունները և հրապարակախոսությունը (մասնավորապես, Լեոնիդ Լեոնովի «Ռուսական անտառը»), բայց բնականաբար առավել սրտամոտ էին մեր գրողների ու լրագրողների անդրադարձները վերոհիշյալ թեմաներին: Բնապահպանական առավել սուր խնդիրների մասին ահագանգել են մեծն Ավետիք Իսահակյանը, Սիլվա Կապուտիկյանը, Չորի Բալայանը և ուրիշներ:

Սույն հոդվածի մեջ համեմատաբար ծավալուն մեջբերմամբ կներկայացնենք ուրույն դրվագներ-հատվածներ խորհրդահայ արձակի երկու դասականների՝ Ստեփան Չորյանի և Վախթանգ Անանյանի «բնապահպանական» ուղվածությամբ ակնարկներից Հայաստանի լեռների անտառապատման և քաղաքային տարածքների կանաչապատման անհրաժեշտության հիմնահարցի վերաբերյալ, որոնք, կարծում ենք, նոր հնչեղություն են ստանում նաև արդի պայմաններում, երբ բնապահպանական և կոնկրետ կանաչապատման ծրագրերի՝ ՉԼՄ-ների կողմից պրոպագանդման-լուսաբանման հասարակական պահանջ է ձևավորվում:

Դեռևս Երկրորդ Համաշխարհային Պատերազմից առաջ՝ 1938 թվականին տպագրված «Ծառերը» ակնարկում Ստեփան Չորյանը անդրադառնում է Հայաստանում ճարահատյալ ծառահատման պատճառներին՝ հիշելով թե ինչպես 1918 թվականին Էջմիածնում անօթևան գաղթականները պարզապես ստիպված էին հատել Վեհարանին հարող ծառերը, քանզի այլապես դատապարտված էին ցրտամահության: Նա մասնավորապես գրում է. «Երբ մարդիկ ցրտամահ են լինում, ծառի պահպանության մասին մտածելը շռայլություն է, իհարկե: Բայց պատմական այդ աղետների օրերից էլ երևի մեր ժողովրդի մեջ մնացել են գիշատիչ հակումներ դեպի անտառը, դեպի ծառն առհասարակ: Չունենալով հանրային սեփականության գիտակցություն, մեր գյուղացի ժողովուրդը անտառը համարելով ոչ իրենը, դարեր շարունակ և արածացրել է, և կտրել, փչացրել, անխնա»¹:

Նույն ակնարկում դիտարկելով Երևանում արդեն այդ ժամանակ ծավալվող կանաչապատման կոնկրետ աշխատանքները, ինչպես նաև Հայաստանում ծառատնկման հեռանկարները՝ ակնավոր գրողը համոզմունք էր հայտնում. «Սա, իհարկե, դեռ սկիզբն է. Անտառացումն ընդգրկելու է նաև մյուս լանջերը, և այն ժամանակ՝ մայրաքաղաքն իրոք ոչ միայն կազատվի փոշուց, այլև կզովանա նրա օդը և նա կդառնա գեղեցկագույն մի քաղաք»²:

Արդեն Հայրենական Մեծ Պատերազմից մի քանի տարի անց հրատարակված «Կանաչ քաղաք» ակնարկում հայ արձակի ճանաչված Վարպետը, արձանագրելով կանաչապատման մասին իր երբեմնի իղծերի, հրապարակախոսության մեջ բարձրացված կոնկրետ առաջարկությունների կենսագործման փաստը, միաժամանակ արձանագրում է առանձին թերություններ ու մատնանշում նոր խնդիրներ: Հիշյալ ակնարկում Ս. Չորյանը մասնավորապես հիշում է. «... Երբ առաջին անգամ ծառեր տնկեցին Աբովյան փողոցում: Դրանք դարձան ընդհանուր ոգևորության առարկա. Անգամ պոետները ոտանավորներ նվիրեցին դրանց»³:

Գրողը նաև բարձրացնում է արդեն տնկված ծառերի խնամքի և պահպանության խնդիրները. «... յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է հոգալ, խնամք տանել, ես կասեի՝ նաև ցավել ծառերի համար, չթողնել, որ երեխաները ծառերը թափահարեն, բարձրանան նրանց վրա, ճղեր կտորեն, դանակով փորագրություններ անեն նրանց կեղծվի վրա կամ պարզապես կեղծվը պոկեն»⁴: Հատկանշական է նաև, որ դեռևս 1938 թվականին տպագրված և մեր զեկուցման մեջ արդեն իսկ հիշատակված ակնարկում էլ Ստեփան Չորյանը

¹ Չորյան Ս., Ծառերը // Չորյան Ս., Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, Հայպետհրատ, Ե., 1962, էջ 505:

² Նույն տեղում, էջ 507:

³ Չորյան Ս., Կանաչ քաղաք // Չորյան Ս., Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, Հայպետհրատ, Ե., 1962, էջ 514:

⁴ Նույն տեղում, էջ 518:

սրտացավ զգայականությամբ ու հրապարակախոսական պաթոսով գրում էր, որ «նորատունկ ծառը փչացնողը պետք է համարվի մարդասպանի պես մի բան և պետք է ենթարկվի մեծ տուգանքի՝ ի խրատ և օրինակ այլոց»¹:

«Խրուլչոյվյան հալոցքի» ժամանակաշրջանում՝ 1958 թ., ճանաչված գրող Վախթանգ Անանյանը նույնպես անդրադարձել է ծառահատման մարտահրավերին՝ գրելով իր ուշագրավ «Կանաչ բարեկամները», որտեղ երկաթե վարագույրով տասնամյակներ շարունակ արտերկրից կտրված իր հայրենակիցների հետ կիսվել է Չեխոսլովակիա (Պրահա) կատարած այցելության տպավորություններով: Նա մասնավորապես գրում է. «մեզ մոտ՝ Երևանում կտրում ենք պարտեզները, այգիները, թե պտղատու ծառերը, թե բարդիները, նրանց տեղը շենքեր կառուցելու համար: Դիլիջանում տապալում են դարավոր ծառերը, որպեսզի քաղաքը լայնացնեն, Կիրովականում մի գործարան կառուցելու համար մի ամբողջ զբոսարան ոչնչացվեց՝ իր ծառերով ու ծաղիկներով: Այդպես չէ Պրագայում: Այնտեղ կանաչի հաշվին շենք կառուցել չի կարելի»²:

Հատկանշական է, որ նույն 1958 թ. Վախթանգ Անանյանը բնապահպանական թեմաներով ելույթ է ունեցել Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի 7-րդ նստաշրջանում, և այդ ելույթի տեքստը հետագայում ընդգրկվել է վաստակաշատ գրողի երկերի 6-րդ հատորում, քանզի կարևորվել է արծարծված հիմնահարցերի հասարակական հնչեղությունը:

Բնապահպանական խնդիրներով մշտապես մտահոգ մեր գրողները և հրապարակախոսները հանդես են եկել նաև թվացյալ անսովոր, ոչ ստանդարտ առաջարկություններով՝ փորձելով Հայաստանում տեղայնացնել ժամանակի նորարարությունները: Ուշագրավ է Վախթանգ Անանյանի կողմից հետևողականորեն բարձրաձայնված առաջարկը հայաստանյան անտառների պտղատու ծառերը պատվաստելու և այդպիսով թե պարենային, թե գեղագիտական խնդիրներ լուծելու հնարավորության մասին. «Այժմ մենք կարող ենք գլխովին պատվաստել մեր երկրում եղած բոլոր վայրի պտղատու ծառերը: Տարիներ կանցնեն, և դրանից մենք կունենանք ոչ միայն պտուղների առատություն մեր երկրում, այլև կպճնվի հայրենի բնությունը նոր, շքեղ զարդերով ... Պատվաստումը մարդուս ձեռքին հզոր ու խելացի միջոց է բուսական աշխարհին իր ճաշակին համապատասխան փոփոխելու համար: Նա հնարավորություն է տալիս «կրթելու» պտուղների վայրենի տեսակները: Եկեք ուրեմն, այդ փորձված միջոցը գործադրենք վայրի բնության վրա: Եկեք մեր հանրային այգիներում եղած ամենաընտիր պտուղները տվող ծառերից կտրոններ ու աչքեր տանենք հանդ և նրանցով պատվաստենք մեր հանրապետության բոլոր վայրի պտղատու ծառերը»:

Եզրափակելով՝ հավելենք, որ քաղաքական ղեկավարության կողմից՝ մոտ ապագայում ՀՀ տարածքում տասը միլիոն ծառ տնկելու նախաձեռնությունը («10 միլիոն՝ հայ, 10 միլիոն՝ ծառ» կարգախոսով) պրոպագանդելու և տեսլականը կյանքի կոչելու գործընթացում նույնպես ուրույն դեր է վերապահված նաև մեր ժամանակակից հրապարակախոսներին ու լրագրողական հանրությանը, նրանց համապատասխան հրապարակումները՝ մուլտիմեդիային «գործիքակազմով» ներկայացնելու:

Арман Сафарян, РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ. В статье рассматривается возможность имплементации характеристик публицистического жанра в комплекс современной мультимедийной журналистики на примерах из истории армянской публицистики, освещающих экологическую проблематику. На протяжении последнего десятилетия исследователи

¹ Տե՛ս Չորյան Ա., Ծառերը // Չորյան Ա., Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, Հայպետհրատ, Ե., 1962, էջ 508:

² Տե՛ս Անանյան Վ., Կանաչ բարեկամներ // Անանյան Վ. Ա., Երկեր վեց հատորով, հատոր չորրորդ, «Հայաստան», Ե., 1970, էջ 537:

настоятельно подчеркивают роль формирования мультимедийного пространства в системе распространения информации. Создаются электронные версии печатных изданий, радиостанций и телеканалов, сформировался своеобразный феномен интернет журналистики, акцентируется необходимость персонализации журналистского материала в условиях мультимедийности. Некоторые исследователи полагают, что изменения в сфере журналистики являются препятствием для развития публицистики, другие же рассматривают эти изменения в качестве новых возможностей для развития жанра.

Ключевые слова: армянская публицистика, экологическая проблематика, мультимедийное пространство, мультимедийная журналистика, персонализированная журналистика.

Arman Safaryan, THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA. The article deals with the possibility of implementation of the features of the opinion journalism into the modern multimedia journalism complex with reference to the coverage of ecological issues in the history of Armenian journalism. Over the past decade, researchers have strongly emphasized the role of the multimedia space formation in the information dissemination system. Online versions of printed periodicals, radio stations and TV channels are being created, a unique phenomenon of the Internet journalism has been formed. Great importance is attached to the personalization of journalistic materials in the multimedia environment. Some researchers believe that changes in the field of journalism hinder the development of opinion journalism, while others consider the same changes as new opportunities for the genre development.

Key words: Armenian journalism, environmental issues, multimedia, multimedia journalism, personalized journalism.